

**ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ  
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

**ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**



**ԿԱՐԳ**

**ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱՆՑԿԱՑՄԱՆ**

**ԵՐԵՎԱՆ-2019**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԱՎԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

ԱՐՁ. No 2, ԿԱՅԱՅԱԾ 13.05.2019 Թ.

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



**ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական սկադեմիա» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Ակադեմիա) որակավորման քննությունների և դասընթացների կազմակերպման ու անցկացման կարգը:

Սույն կարգի իրավական հիմքն են ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, ՀՀ Կրթության մասին օրենքը, ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքը, ԲՈԿ-ի կանոնադրությունը և Ակադեմիայի կանոնադրությունը և ուսման կանոնագիրքը:

**II. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՎ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ  
ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

1. Որակավորման քննությունները գիտական աստիճանաշնորհման անբաժանելի մասն են, որոնց նպատակը թեկնածուական ատենախոսության վրա ինքնուրույն աշխատող

անձի՝ **ՀԱՅՅՈՐԴԻ**՝ որպես ապագա գիտնականի մասնագիտական պատրաստվածության ստուգումն է:

2. Սահմանվում են որակավորման քննություններ՝
  - մասնագիտական առարկայից,
  - ոչ մասնագիտական առարկաներից՝ օտար լեզվից քննություն և ստուգարք՝ ինֆորմատիկայից:
3. Որակավորման քննություններ կամ ստուգարք կարող են հանձնել այն անձինք, որոնք ունեն բարձրագույն կրթություն (դիպլոմավորված մասնագետ կամ մագիստրոս):
4. Քննությունները և ստուգարքը հանձնվում են ԲՈԿ-ի հաստատած ծրագրերով:
5. Որակավորման քննությունները և ստուգարքը կազմակերպվում են տարեկան 2 քննաշրջաններով (մայիս – հունիս և հոկտեմբեր – նոյեմբեր ամիսներին):

### **III. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՒԳԱՐՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

6. Քննություններին մասնակցելու համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը.
  - դիմում՝ Ակադեմիայի ռեկտորի անունով,

- բարձրագույն կրթության փաստաթղթի պատճենը (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին):
7. Ակադեմիան ռեկտորի հրամանով հաստատում է որակավորման քննությունների և ստուգարքի ընդունման հանձնաժողովների կազմեր:  
Հանձնաժողովները հաստատվում են հետևյալ կազմով՝ նախագահ (գիտության դոկտոր կամ պրոֆեսոր, եթե մասնագիտական որակավորման քննություն է, և գիտության թեկնածու կամ դոցենտ, եթե ոչ մասնագիտական քննություն է կամ ստուգարք) և 2 – 4 անդամներ:
  8. Որակավորման քննությունների և ստուգարքի օրերի համար կազմվում է ժամանակացույց, որը հաստատում է Ակադեմիայի ռեկտորը:
  9. Հարցատոմսերը կազմվում են քննության օրվանը նախորդող օրվա ընթացքում հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդի և հանձնաժողովի նախագահի պարտադիր մասնակցությամբ, քննության մասնակիցների թվից մեկով ավելի քանակով (եթե, օրինակ, քննությանը մասնակցում է երեք մարդ, կազմվում է 4 տոմս):

10. Քննության և ստուգարքի ընթացքում յուրաքանչյուր հայցորդի համար լրացվում է արձանագրություն, որտեղ գրանցվում են քննական հարցերը և քննության վերջնական արդյունքը:
11. Որակավորման քննությունները գնահատվում են 4 բալային համակարգով՝ «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար»:  
Արձանագրությունը ստորագրում են քննական հանձնաժողովի նախագահը և անդամները: Արձանագրությունները պահպանվում են գիտահետազոտական կենտրոնում:
12. Քննությանը և ստուգարքին մասնակցած անձինք արդյունքների մասին տեղեկանում են նույն օրը:
13. Որակավորման քննության և ստուգարքի հանձնման մասին Ակադեմիան տալիս է տեղեկանք:
14. Քննությունների վերահանձնում տվյալ քննաշրջանում չի թույլատրվում:  
Որակավորման քննությունները և ստուգարքը չհանձնած հայցորդները կարող են դրանք հանձնել հաջորդ քննաշրջաններում:
15. Որակավորման քննությունների ու ստուգարքի անցկացման ընթացքը վերահսկում է գիտահետազոտական կենտրոնը:

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

I	Ընդհանուր դրույթներ.....	3
II	Որակավորման դասընթացների և քննությունների կազմակերպման ու անցկացման նպատակը և խնդիրները....	3
III.	Քննությունների և ստուգարքի անցկացման ընթացակարգը...	4

